# Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 20 | Հունիս | 2019 թ. |
| **[4] Մատուցման ամսաթիվը** | | |
| 3 | Դեկտեմբեր | 2018 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 8339877720 |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 0 0 9 1 7 8 9 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [10] Անվանումը | «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ » Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [11] Բանկային տվյալները | N 900018001694 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ Կոմիտաս 51շ 3րն |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | | |
|---|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 | |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | |
| [17] Բանկային տվյալները | Բանկ,ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական | N 900011000834 |
| [18] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | |
| [19] Լրացուցիչ տվյալներ | Քրեական գործ թիվ 15862018 Նկար -մշակութաբանական փորձաքննություն | |
| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | |
| | Լիազորագիր Համար | |
| | Լիազորագիր Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| NN Ը/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ծառայությունների քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Քրեական գործ թիվ 15862018 Նկար -մշակութաբանական փորձաքննություն | հատ | 1 | 6000 | | 6000 |
| Ընդամենը | | | | | | 6000 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող) MANUKYAN AGAPI 6011780083

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայությունը (աշխատանքը) ընդունող

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

20/06/2019 11:13:22

# Ո Ր Ո Շ Ու Մ

## դատամշակութաբանական փորձաքննություն նշանակելու մասին

14 նոյեմբերի 2018թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ, երկրորդ դասի խորհրդական՝ Լ.Ա.Կարապետյանս, ուսումնասիրելով թիվ 15862018 քրեական գործի նյութերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

19.09.2018թ.-ին ժամը 15:20-ին հաղորդում, այնուհետև բացատրություններ է տվել <<Բագին>> փաստաբանական գրասենյակի փաստաբան Լ.Սահակյանը, որ 19.09.2018թ.-ին՝ ժամը 13:40-ի սահմաններում Արսեն Բենիկի Չիչյանը իրացնելով իր ենթադրյալ իրավունքները վնասել է Երևան քաղաքի Նալբանդյան փողոց 7 շենքի 1 և 1-Ա հասցեներում գտնվող իր գրասենյակների մուտքի դռների փականները՝ պատճառել 35.000 ՀՀ դրամի գույքային վնաս, մուտք գործել նշված տարածքներ և 1 հասցեում գտնվող գրասենյակի՝ իր աշխատասենյակի պատի վրայից գաղտնի հափշտակել է 2.500.000 ՀՀ դրամ արժողության Սանկտ-Պետերբուրգ պատկերով լուսանկար, իսկ աշխատանքային սեղանի տակ գտնվող պահարանի դարակից՝ 726.000 ՀՀ դրամին համարժեք 1500 ԱՄՆ դոլար: 20.09.2018թ.-ին ժամը 03:00-ին հաղորդում է տվել Ա.Չիչյանը, որ 19.09.2018թ.-ին՝ ժամը 17:00-ից մինչև 20.09.2018թ.-ը ժամը 00:30-ն ընկած ժամանակահատվածում Լ.Սահակյանը իրացնելով իր ենթադրյալ իրավունքները կատարել է ինքնիրավչություն փոխելով դատարանի վճռով իրեն հատկացված Երևան քաղաքի Նալբանդյան փողոց 7 շենքի 1 և 1-Ա հասցեների մուտքի դռների փականները:

Դեպքի առթիվ 2018 թվականի սեպտեմբերի 20-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին մասով, 322-րդ հոդվածի 1-ին մասով և 322-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 15862018 քրեական գործը, որը նախաքննության կատարման նպատակով ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

Քննության ընթացքում տուժող Լուսինե Սահակյանից առգրավվել է Սանկտ-Պետերբուրգի <<Կապույտ կամուրջ>>-ի պատկերով կտավը:

Նկատի ունենալով, որ նշված կտավի արժեքը պարզելու համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ, 243-245 և 248 հոդվածներով.

## ՈՐՈՇԵՑԻ՝

1. Թիվ 15862018 քրեական գործով նշանակել դատամշակութաբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետներին:

2. Փորձաքննության կատարման նպատակով տրամադրել Լուսինե Սահակյանից առգրավված Սանկտ-Պետերբուրգի <<Կապույտ կամուրջ>>-ի պատկերով կտավը՝ փաթեթավորված և կնիքված ՀՀ քննչական կոմիտեի թիվ 348 կնիքի դրոշմով:

3. Փորձագետին պարզաբանման համար առաջադրել հետևյալ հարցը.

- Փորձաքննությանը տրամադրված Սանկտ-Պետերբուրգի <<Կապույտ կամուրջ>>-ի պատկերով կտավը գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի:
- Որքան է կազմել ներկայացված Սանկտ-Պետերբուրգի <<Կապույտ կամուրջ>>-ի պատկերով կտավի շուկայական արժեքը 2018 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ:
- Հնարավոր է արդյոք որոշել ներկայացված կտավի կատարման ժամանակաշրջանն ու եղանակը, թե ոչ, եթե այո, ապա՝ առանձին-առանձին նշել դրանց կատարման եղանակն ու ժամանակաշրջանը և ում կողմից, որտեղ է ստեղծվել նշված կտավը, նշել հեղինակի անունը:
- Փորձաքննությանը ներկայացված կտավը բնօրինակ /կրկնօրինակներ/ է, թե պատճե:
- Փորձագետին թույլ տալ փորձաքննության ընթացքում պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման և քրեական գործի համար:

- Հանձնարարել փորձագիտական կենտրոնի պետին փորձաքննություն կատարող փորձագետին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված իրավունքները և պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար նախատեսված պատասխանատվության մասին:

*Ծանոթություն: Տուժող Լուսինե Սահակյանին / հեռ. 093-433-556 / թույլատրվել է մասնակցել փորձաքննության կատարմանը, ուստի խնդրվում է վերջինիս հետ կապնվել նշված հեռախոսահամարով:*

**ՀԿԳ քննիչ՝** **Լ.Ա.Կարապետյան**